ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «17» 01 2022թ N 29-Ա/1

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի N 1567-Լ հրամանի 2-րդ կետով՝

հրամայում եմ.

1. Հաստատել սոցիալական փաթեթի շրջանակներում պարտադիր պայմանների վերաբերյալ պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել սոցիալական փաթեթի շրջանակներում պարտադիր պայմանների վերաբերյալ պայմանագրի օրինակելի ձևի մասին տեղեկատվության հրապարակումը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում:

ՍԻՄԻԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

Հավելված
ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի նախագահի
2022 թվականի նոյեմբերի 17-ի N 29-Ա/1 հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնք _____ «____»_____ _____ թ.
Օր ամիս (տառերով) տարի

_____-ը (այսուհետ՝ Զբոսաշրջային օպերատոր),
(զբոսաշրջային օպերատորի լրիվ անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը ազգանունը)
որը գործում է իր կանոնադրության հիման վրա, և
_____-ը (այսուհետ՝
(հյուրանոցային ծառայություն մատուցող անձի լրիվ անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)
Հյուրանոցային ծառայություն մատուցող անձ), որը գործում է իր կանոնադրության հիման վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի՝ 2022 թվականի սեպտեմբերի 30-ի N 1567-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրով Զբոսաշրջային օպերատորը և Հյուրանոցային ծառայություն մատուցող անձը պարտավորվում են սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակում համագործակցել Հրամանով սահմանած կարգով:

2. Հյուրանոցային ծառայություն մատուցող անձը մատուցում է ծառայություններ սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակում (այսուհետ՝ Ծառայություններ) իր կողմից շահագործվող հյուրանոցային տնտեսության օբյեկտ(ներ)ում, իսկ Զբոսաշրջային օպերատորը ընդունում է Ծառայությունները և կատարում վճարումներ Հյուրանոցային ծառայություն մատուցող անձին մատուցված ծառայությունների դիմաց:

3. Ծառայությունների համար մեկ օրվա/գիշերակացի հաշվարկով մեկ միասնական կամ առանձին սակագները, Զբոսաշրջային օպերատորի միջնորդավճարի չափը կարող են հաստատվել առանձին հավելվածով և դառնալ սույն պայմանագրի անբաժանելի մաս:

4. Ծառայությունները ընդգրկում են

   1) գիշերակաց (հյուրանոցային տնտեսության օբյեկտում),
   2) __-անգամյա սնունդ
   3) _____

   այլ ծառայություններ

5. Զբոսաշրջային օպերատորը նախապես ներկայացնում է Ծառայությունների պատվեր (այսուհետ՝ Ամրագրման հայտ), որտեղ կարող է նշվել.

   1) Տեղեկություն հյուրերի մասին (հյուրերի թիվը, տարիքը, անուն, ազգանուն),
   2) ժամանման և մեկնման ժամկետները (տարի, ամիս, օր, ժամ),
   3) պատվիրվող սենյակի տեսակը,
   4) _____

   այլ տեղեկատվություն

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

6. Հյուրանոցային ծառայություն մատուցողը սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակում պարտավոր է.

1) Պայմաագրի 3-րդ կետով նախատեսված հավելվածի բացակայության դեպքում Զբոսաշրջային օպերատորին տրամադրել իր կողմից հայտարարված հյուրանոցային ծառայության գործող մանրածախ գնի վերաբերյալ տեղեկատվություն՝ սեզոնային գներ ունենալու դեպքում՝ նաև նշելով սեզոնային գները Զբոսաշրջային օպերատորի կողմից Հրամանի հավելվածի 6-րդ կետի կատարման նպատակով:
2) Պայմանագրի 3-րդդ կետով կամ 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված արժեքներում ցանկացած փոփոխություն իրականացնելու դեպքում պատշաճ ծանուցել փոփոխությունների մասին:

3) Սոցիալական փաթեթի շրջանակում ծառայություն մատուցելիս չառաջարկել սոցիալական փաթեթի շահառուին իր կողմից մատուցվող հյուրանոցային ծառայությունների համար ավելի ցածր գին, քան իր կողմից հայտարարած հյուրանոցային ծառայության գործող մանրածախ գինը:
4) Ամրագրումների հայտերով նախատեսված ծառայություններն իրականացնել ամրագրումներով սահմանված ժամկետներում՝ իր կողմից հաստատված ներքին կանոնակարգին համապատասխան:
5) Ամրագրման հայտը ընդունել և հաստատել տվյալ ժամանակահատվածում իր կողմից շահագործվող օբյեկտում առկա հնարավորությունների սահմաններում:
6) Զբոսաշրջային օպերատորին տեղեկացնել իր կողմից շահագործվող հյուրանոցային տնտեսության օբյեկտում սոցիալական փաթեթի շրջանակներում ամրագրված յուրաքանչյուր սպառողի՝ հյուրանոցային ծառայություններից օգտվելու մասին՝ ոչ ուշ, քան ամրագրման ժամկետի ավարտին հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրերի ընթացքում:
7) Ամրագրման հայտում ընդգրկված հյուրանոցային ծառայությունները մատուցել անձամբ և պատշաճ որակով:
8) Չմիջամտել սոցիալական փաթեթի շահառուի՝ զբոսաշրջային օպերատորի ընտրության հարցում:

7. Հյուրանոցային ծառայություն մատուցող անձը իրավունք ունի.

1) Զբոսաշրջային օպերատորի կողմից ներկայացված ամրագրումների հայտերը ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, մերժել այն հայտում նշված նշված ժամանակահատվածում ազատ համարների բացակայության, Զբոսաշրջային Օպերատորի անպատասխանատու աշխատանքի և այլ հիմքերով:
2) Իր կողմից սահմանված ժամկետում Զբոսաշրջային օպերատորից ստանալ վարձատրություն Ծառայությունների դիմաց:
3) Ամրագրումների հայտերով նախատեսված ժամկետում մատուցված Ծառայությունների գումարը Զբոսաշրջային օպերատորից չստանալու դեպքում սահմանել վճարման այլ ժամկետներ, կամ հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել Գործակալից վճարել մատուցված Ծառայությունների և պատճառված վնասի համար.

4) Զբոսաշրջային օպերատորի կողմից սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում կատարված պատվերից (ամրագրումից) հրաժարվելու դեպքում Զբոսաշրջային օպերատորից պահանջել վճարել տուգանք

ա) Պատվերի (ամրագրման) գնի ____%-ի չափով, եթե Զբոսաշրջային օպերատորը
(նշվում է 0-ից 25)
պատվերից (ամրագրումից) հրաժարվելու մասին Հյուրանոցային ծառայություն մատուցող անձին տեղեկացրել է ոչ ուշ, քան ամրագրված ծառայությունների մատուցման սկզբնաժամկետից _____ օր առաջ.

(Նշվում է առավելագույնը 2)
բ) Պատվերի (ամրագրման) գնի _____ %-ի չափով, եթե Զբոսաշրջային օպերատորը
(նշվում է 0-ից 50)
պատվերից (ամրագրումից) հրաժարվելու մասին Հյուրանոցային ծառայություն մատուցող անձին տեղեկացրել է սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված ժամկետի խախտմամբ, կամ Զբոսաշրջային օպերատորի հետ սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած շահառուն ընդհանրապես չի օգտվել ամրագրված ծառայություններից:

8. Զբոսաշրջային օպերատորը պարտավոր է.

1) Կատարել վճարումներ Հյուրանոցային ծառայություն մատուցող անձին մատուցված Ծառայությունների դիմաց:
2) Չառաջարկել սոցիալական փաթեթի շահառուին Ծառայությունների համար ավելի բարձր գին, քան Հյուրանոցային ծառայություն մատուցող անձի կողմից հայտարարած հյուրանոցային ծառայության գործող մանրածախ գինը:
3) Ամրագրման հայտը Հյուրանոցային ծառայություն մատուցող անձին ներկայացնել Ծառայությունների մատուցման նախատեսվող ժամկետից առնվազն _____ օր առաջ:
4) Սոցիալական փաթեթի շահառուին տրամադրել ճշգրիտ, Հյուրանոցային ծառայություն մատուցող անձի հետ համաձայնեցրած տեղեկատվություն Ծառայությունների վերաբերյալ:
5) Ժամանակին տրամադրել ուղեգիր հյուրանոցային տնտեսության օբյեկտում սոցիալական փաթեթի շահառուի գրանցման ժամանակ ներկայացնելու նպատակով:

6) Հյուրանոցային ծառայություն մատուցող անձի կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթերը ստորագրությամբ չհաստատելու դեպքում 3 բանկային օրվա ընթացքում Հյուրանոցային ծառայություն մատուցող անձին ներկայացնել մատուցված Ծառայությունները (կամ դրանց մի մասը) չընդունելու վերաբերյալ գրավոր հիմնավորում:
7) Ամրագրման հայտով չնախատեսված լրացուցիչ ծառայությունների դիմաց վճարել Հյուրանոցային ծառայություն մատուցող անձին, եթե այդ ծառայությունները համաձայնեցված են եղել իր կողմից:
8) Իր կողմից Պայմանագրի շրջանակներում պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում Հյուրանոցային ծառայություն մատուցող անձին հատուցել վերջինիս կրած փաստացի վնասները:

9. Զբոսաշրջային օպերատորը իրավունք ունի

1) Ծառայությունները ոչ պատշաճ կերպով ստանալու դեպքում այդ ծառայությունները ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Հյուրանոցային ծառայություն մատուցող անձին թերությունները շտկելու նպատակով:
2) Սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետում թերությունը չշտկելու դեպքում պահանջել դրա հետևանքով կրած վնասի հատուցում:
3) Հյուրանոցային ծառայություն մատուցող անձից պահանջել ստանձնած Ծառայությունների պատշաճ մատուցում:
4) Պահանջել Հյուրանոցային ծառայություն մատուցող անձից տեղեկատվություն հյուրանոցային ծառայությունների և դրանց փոփոխությունների վերաբերյալ:
5) Հյուրանոցային ծառայություն մատուցող անձի կողմից նշված թույլատրելի սահմաններում և նախապես վերջինիս տեղեկացնելով Ամրագրման հայտում կատարել փոփոխություններ:

3. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

10. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. **ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

11. Սույն պայմանագրով չկարգավորված դրույթները կարգավորվում են Հրամանով սահմանված կարգով:

12. Պայմանագիրը կազմված է հայերենով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

13. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 20__թ _____-ի _____-ը:

14. Պայմանագիրը կարող է լուծված համարվել կողմերից մեկից այդ մասին գրավոր դիմում ստանալու օրը՝ երկկողմ բոլոր պարտավորությունները մարելու պայմանով:

15. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6. **ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հյուրանոցային ծառայություն մատուցող անձ	Զբոսաշրջային օպերատոր
Անվանում	Անվանում
Հասցե	Հասցե
ՀՎՀՀ՝	ՀՎՀՀ՝
h/h	h/h
Տնօրեն կամ լիազորված անձ	Տնօրեն կամ լիազորված անձ
_____	_____
Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն
Ստորագրություն	Ստորագրություն